





Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Ց

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ

ՀՈՎԱՀԱՐՈՒԹԻՒՆ



նչ է հովհարութիւնը:

— Գոց տեղերու օգին փոխուիլըն ու նորոգուիլն է. եւ գոց տեղ կսեպուին ժողովարանները, տեսարանները, եկեղեցիները, հիւանդանոցի սրահները, բանտները, կառքերը, նաւերը եւ այլն:

Տան մը մէջի օդը միշտ շարժման մէջ է թէ չէ:

— Այո, որ տանը կամ սենեկին մէջ որ բնակութիւն կայ՝ այն տեղը միշտ երկու տեսակ օդի հոսանք կլինի. մէկը տաք՝ որ դէպի դուրս կվազէ, մէկալը պաղ՝ որ ներս կլեցուի:

Այսպէս երկու հոսանք լինելուն ինչ ապացոյց ունիս:

— Բնակուած սենեկի մը դրանը վարի դին ու վերի կողմը մէկ մէկ ճրագ դիր վառած.

բոցերուն շարժմունքէն կը տեսնես որ վարը պաղ օդի հոսանք մը կայ որ ներս կմտնէ, վերն ալ տաք օդի հոսանք մը որ դուրս կվազէ:

Դրան վերի կողմը դրուած ճրագին բոցը ինչո՞ւ համար սենեկէն դէպի դուրս կհրուի:

— Վասն զի սենեկին մէջի տաք օդը վեր կենէ ու դրան վերի ճեղքէն դուրս կմղուի վարի օդին ուժովն որ աւելի խիտ ու թանձր է:

Երբ որ սենեկին մէջ լաւ կրակ վառած լինի՝ այս բանս չհանդիպիր. վասն զի այն ատեն դրան ամէն ճեղքերէն ալ ներս հոսանք մը կվազէ որ կրակին սնունդ տայ:

Դրան վարի կողմը դրուած ճրագին բոցը ինչո՞ւ համար դէպի սենեկին ներսի դին կը ծրուի:

— Վասն զի դրսի պաղ օդը դրան վարի ճեղքէն դէպի սենեկին ներսի կողմը կգիմէ:

որպէս զի գուրս ելնող տաք օգոյն պարասլ թողած տեղը լեցընէ:

Ինչէն է որ տան մէջի օգը՝ թէպէտ եւ կրակ վառած չլինի՝ գրսի օգէն աւելի տաք է:

— Վասն զի տան մէջ օգը կամաց կամաց կփոխուի. ուստի քիչ ատենէն մեր մարմնոյն ու սենեկին օգոյն տաքութիւնները զուգակշիռ կլինին, եւ սենեակն ալ պաղ չերեւնար մեզի:

Ինչէն է որ բարակ հովը փականքներուն ծակերէն, եւ դռներուն ու պատուհաններուն վարի եւ կողմնական ճեղքերէն ներս կսպրդի կմանէ:

— Վասն զի մէջը բնակութիւն եղած սենեկին օգը գրսի օգէն աւելի տաք լինելով, վառարանին մէջ կը արձրանայ կամ վառարանէն դուրս կելնէ. այն ատեն պաղ օգի հոսանքները բռնութեամբ ներս կմտնեն փականքներուն ծակերէն, եւ դռներուն ու պատուհաններուն ճեղքերէն, որպէս զի տաքնալով վեր ելած օգոյն տեղը բռնեն:

Ինչէն է որ թէատրոններուն ճեմելիքները եւ ուրիշ անոնց նման բարձր տեղերը աւելի տաք կլինին քան թէ գետնայարկը:

— Վասն զի տեսարանի կամ թէատրոնի տաք օգը վեր կելնէ. եւ սրչափ որ պաղ օգ կարենայ ներս մտնել՝ վարի կողմերը կմնայ մինչեւ որ տաքնայ:

Ինչէն է որ կրակարանները (սոսրս) վնասակար են առողջութեան, եւ գրեթէ միշտ գլխու ցաւ կստանաւեն՝ երբոր գոց սենեկի մը մէջ վառուին:

— Վասն զի նախ՝ կրակարանին բերանը գոց է, եւ օգը չնորոգուիր կամ խիստ անկատար կերպով կնորոգուի: Երկրորդ, երբոր տեղոյ մը օգը սաստիկ չոր է, մարդուս կաշիին վրայ վնասակար ազդեցութիւն մը կընէ:

Բովարաններու մէջ հովահարութիւնն ինչ կերպով կընեն:

— Երկու մեծամեծ հորեր կփորեն, այնպէս որ մէկուն մէջէն վար իջնող օգը առաջ բոլոր բովարանին մէջ պտտի ու ետքը մէկալ հորէն դուրս ելնէ:

Ապականեալ օգը վեր հանելու հնարքը սրն է:

— Երկու հորերէն մէկուն մէջ լաւ կրակ մը կվառուի. կրակով անգայտացած օգը վեր ելնելով՝ ծխոյն հետ մէկտեղ կը աշէ ու կտանի հորին մէջի բոլոր ապականեալ կազերը:

Շչնառութիւնը ինչ ազդեցութիւն կուսնայ սենեկի մը օգոյն վրայ:

— Թթուածնին քանակը կսակսեցընէ, եւ ածխային թթուին ու բորականին քանակը կաւելցընէ:

Մարդս մէկ ժամուան մէջ 63 խորանարդ տասնամեթր թթուածին կը ծծէ, եւ օրը 4 խորանարդ մեթրէն աւելի օդ անշնչելի կընէ:

Ինչ հնարքով կարելի է պակսեցընել ապականեալ օգոյն վնասակարութիւնը այնպիսի տան մը մէջ՝ ուր որ մարդս հարկադրուած է օրուան մէկ մասը անցընելու:

— Բոլոր սենեակներուն մէջ հովահարութեան յարմար գործիքներ դնելով:

Ինչէն է որ մեծամեծ քաղաքներու եւ բազմամարդ գործարաններու բնակիչները գեղնած ու տոգոյն կլինին:

— Վասն զի այնպիսի աղտոտ օգ մը կծծեն որ թթուածին չկայ մէջը: Մարդուս արեանը կարմիր գոյն տուողը թթուածինն է:

Ինչէն է որ օրուան մեծ մասը բաց տեղ անցընողներուն երեսը ընդհանրապէս կայտառ ու կարմիր կլինի:

— Գլխաւոր պատճառն այս է որ ծծածնին զով ու մաքուր օգ է, եւ մէջը շատ թթուածին կայ:

Մեծամեծ քաղաքներու մէջ մարդուս արիւնն ապականողը միայն օգոյն գէշութիւնը չէ. ուրիշ շատ պատճառներ ալ կան՝ որոնցմէ աղատ են գեղացիները:

Ինչէն է որ մարդուս առողջութեանը այնչափ օգտակար չեն մեծ քաղաքները՝ որչափ գեղերը:

— Վասն զի մեծամեծ քաղաքներուն օգը խիստ շատ պատճառներով միշտ անմաքուր է, եւ գեղի օգոյն չափ թթուածին չունի: